

Հարգելի հաճախորդ, Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բյուզանդի 7-11) «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնում է Ձեր անձնական տվյալների մշակում «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի և Ձեր միջև կնքված պայմանագրի կատարման, ինչպես նաև պայմանագրի պայմաններից բխող և «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործողությունների իրականացման նպատակով: Անձնական տվյալների հասանելիությունը կամ Անձնական տվյալների մշակումը սահմանափակված կլինի միայն «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի կողմից հստակորեն լիազորված անձանց շրջանակով: «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն Ձեր տվյալները մշակելու համար կարող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, այլ անձանցից ստանալ Ձեզ հետ պայմանագիր կնքելու նպատակով, իր գործողությունների, ինչպես նաև իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ ցանկացած տվյալ: Մշակման ենթակա տվյալների ցանկը ներառում է Ձեր կողմից «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ին տրամադրված և հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված անձնական տվյալները, ինչպես նաև ԱՔՌԱ Վարկային բյուրոյից, ՀՀ կենտրոնական բանկից, իրավապահ մարմիններից, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից Ձեր վերաբերյալ «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ին տրամադրված տվյալները: Ցանկը սահմանափակ չէ, և «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն այլ աղբյուրներից ևս կարող է ստանալ Ձեր անձնական տվյալները: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, ինչպես նաև երրորդ անձանց և «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրերի (առուղիտորական, խորհրդատվական, ծառայությունների մատուցման, ապահովագրության պայմանագրերի կնքման և այլ նպատակներով) համաձայն՝ Ձեր անձնական տվյալները կարող են փոխանցվել երրորդ անձանց կամ վերջիններիս կարող է տրամադրվել հնարավորություն օգտվելու այդ տվյալներից: Անձնական տվյալները մշակվելու են տվյալներ մշակելու նպատակներն իրականացնելու համար օբյեկտիվորեն անհրաժեշտ ժամկետով: Սույն ծանուցման պաշտոնական հրապարակման պահից Դուք համարվում եք ծանուցված, և այդ պահից սկսած մեկամսյա ժամկետում Ձեր կողմից առարկություն չներկայացնելու դեպքում համարվում է, որ Դուք տվել եք Ձեր համաձայնությունը «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ին՝ մշակելու Ձեր անձնական տվյալները: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Դուք ունեք մշակման հետ կապված ցանկացած գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև Ձեր կողմից տվյալների ոչնչացման կամ տվյալների մշակման դադարեցման պահանջ ներկայացնելու իրավունք: Ձեր կողմից հայցվող դադարեցման պահանջ ներկայացվում է «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ին գրավոր դիմումի միջոցով, որին ընթացք է տրվում միայն այն դեպքում, երբ դիմումում ներկայացված պահանջը հնարավոր է բավարարել՝ հիմք ընդունելով «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի ներքին իրավական ակտերը և անձնական տվյալների մշակման անհրաժեշտության բացակայությունը: Սույն ծանուցման վերաբերյալ, ինչպես նաև այլ հարցերի դեպքում կարող եք դիմել «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի ցանկացած մասնաճյուղ